## Կարևոր կետերը

- Յուրաքանչյուր պահումի համար Ձեր գործատերն իրավունք ունի մինչև $1,50 գանձել՝ որպես վարչական ծախս:
- Դուք կարող եք բողոքարկել Ձեր վճարելիք գումարի չափը՝ ցանկացած ժամանակ Ձեր փաստաթղթերը դատարանին ներկայացնելով:
- Աշխատավարձից պահում կատարելու հանձնարարության պատճենն ստանալուց հետո Դուք 10 օր ունեք՝ գումարը բողոքարկելու համար, մինչև առաջին պահումը կատարվի:
- Ձեր գործատիրոջից երեխայի ապրուստադրամը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկվում է խնամող ծնողին:
- Ապրուստադրամը վճարելուց խուսափելը հանցագործություն է: Եթե Դուք դիտավորյալ կերպով ազատվեք աշխատանքից՝ երեխայի ապրուստադրամը չվճարելու համար, Դուք կարող եք դատական հետապնդման ենթարկվել:

*Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:*


*Առնոլդ Շվարցենեգեր*, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

*Քիմբըրլի Բելշե*, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

*Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի՝*, Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
*www.childsup.ca.gov*


PUB 250 (9/08)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

# Ապրուստադրամն աշխատավարձից պահելու հանձնարարությունը

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

## Ի՞նչ է աշխատավարձից պահում կատարելու հանձնարարությունը

Աշխատավարձից պահում կատարելու հանձնարարությունը, որը կոչվում է նաև «երեխայի ապրուստադրամը եկամուտից պահելու մասին որոշում/ծանուցագիր», գործատիրոջից պահանջում է պահումներ կատարել ծնողի աշխատավարձից՝ երեխայի, ամուսնական կամ բժշկական նպաստի վճարման համար: Աշխատավարձից կատարվող պահումների գումարը սահմանվում է դատարանի ամենավերջին որոշման համաձայն, սակայն այդ գումարը կարող է աճել, եթե ծնողի պարտքն աճում է:

## Ինչու են պահումներ կատարում իմ աշխատավարձից

Դաշնային և նահանգային օրենքը պահանջում է աշխատավարձից պահումներ կատարել համարյա բոլոր այն դեպքերում, երբ դատարանի որոշում է կայացվում ապրուստադրամի վճարման վերաբերյալ: Պահումների մասին որոշումն ընդունվում է անգամ այն դեպքում, երբ ծնողը կատարում է վճարումները: Պահումներն օգնում են երեխաներին ժամանակին ստանալ ապրուստադրամը: Պահումները նաև Ձեզ են օգնում՝ Ձեր կատարած վճարումների հաշիվը պահելու հարցում:

## Որքա՞ն ժամանակ են կատարվելու պահումները

Պահումները կկատարվեն այնքան ժամանակ, մինչև ապրուստադրամ վճարելու ժամկետն ավարտվի և վճարվեն բոլոր պարտքերը

## Կարո՞ղ են ինձ աշխատանքից հեռացնել պահումների պատճառով

Ոչ: Պահումների պատճառով աշխատանքից հեռացնելն անօրինական է: Եթե Դուք կարծում եք, որ այդ պատճառով Ձեզ հեռացրել են աշխատանքից, խորհուրդ ենք տալիս դիմել փաստաբանի:

## Իմ գործատերը պարտավո՞ր է կատարել աշխատավարձից պահում կատարելու հանձնարարությունը

Այո: Աշխատավարձից պահում կատարելու հանձնարարությունն իրավական փաստաթուղթ է, որն ուղարկվում է Ձեր գործատիրոջը: Դրա պահանջը չկատարելու դեպքում Ձեր գործատերը կարող է դատական հետապնդման ենթարկվել:

## Ի՞նչ անել, եթե իմ գործատերը կատարում է պահումները, սակայն դրանք իմ հաշվին չեն գրանցվում որպես կատարված վճարումներ

Ձեր գործատիրոջը ցուցումներ են տրվում պահումները կատարելու վերաբերյալ: Չնայած նրանից պահանջվում է ժամանակին կատարել պահումները և ուղարկել Ձեր անունից, Դուք եք պատասխանատու այն բանի համար, որ գումարը ժամանակին ստացվի երեխաների օգնության գործակալության կողմից: Ստուգեք ապրուստադրամի Ձեր քաղվածքները և պահեք վճարման ստացականները, որպեսզի համոզված լինեք, որ վճարումները գրանցվում են Ձեր հաշվին: Եթե որևէ խնդիր առաջանա, անմիջապես դիմեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությանը:

## Որքա՞ն գումար կարող է պահվել իմ աշխատավարձից

Սովորաբար, Ձեր զուտ աշխատավարձի մինչև 50 տոկոսը կարող է պահվել որպես երեխայի ապրուստադրամ, սակայն որոշ դեպքերում այն կարող է կազմել մինչև 65 տոկոս: Եթե ապրուստադրամի՝ դատարանով որոշված ընդհանուր գումարը Ձեր զուտ աշխատավարձի 50 տոկոսից ավելին է, ապա ապրուստադրամի Ձեր պարտավորությունն ամբողջապես չի մարվում:

Դուք պարտավոր եք վճարել տարբերությունը: Եթե ապրուստադրամի՝ դատարանով որոշված ընդհանուր գումարը Ձեր զուտ աշխատավարձի 50 տոկոսից ավելին է, ապա հնարավոր է, որ Դուք կարող եք փոխել դատարանի սահմանած ապրուստադրամի չափը: Խնդրեք երեխաների օգնության տեղական գործակալությանը վերանայել Ձեր գործը՝ ապրուստադրամի չափի մասին որոշումը փոխելու համար:

## Ի՞նչ անել աշխատանքը փոխելու դեպքում

Ամեն անգամ աշխատանքը փոխելիս Դուք պետք է այդ մասին տեղյակ պահեք երեխաների օգնության տեղական գործակալությանը: Երեխաների օգնության տեղական գործակալությանը հարկավոր է տեղյակ պահել նաև այն դեպքում, եթե Դուք գործազուրկ դառնաք:

Եթե անգամ Դուք չեք աշխատում, միևնույն է, Դուք պարտավոր եք ամեն ամիս վճարում կատարել: Դուք պետք է անմիջապես դիմեք երեխաների օգնության տեղական գործակալությանը՝ ապրուստադրամի չափը փոխելու համար: